600.0190.29.11.05

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 նոյեմբերի 2005 թվականի № 190Ա
ք. Երևան

ԷԼԵԿՏՐԱԷՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍԱԿԱԳՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի ա) կետը, 21-րդ, 22-րդ հոդվածները, Հայաստանի Հանրապետության էներգետիկայի կարգավորող հանձնաժողովի 2003 թվականի հունվարի 13-ի «Հայաստանի Հանրապետության էներգետիկայի բնագավառում սակագների սահմանման ու վերանայման կարգը հաստատելու մասին» №1Ն որոշումը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Սահմանել՝

1.1. «Հայկական ատոմային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության համար երկդրույք սակագնային համակարգում՝

ա) առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 2.703 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 3.244 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

բ) հզորության ամսական վճարը՝ 2168.68 դրամ/կՎտ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 2602.42 դրամ/կՎտ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը:

1.2. «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (ՀրազՋԷԿ)» բաց բաժնետիրական ընկերության համար երկդրույք սակագնային համակարգում՝

ա) առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 9.475 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 11.370 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

բ) հզորության ամսական վճարը՝ 411.95 դրամ/կՎտ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 494.34 դրամ/կՎտ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը:

1.3. «Երևանի ջերմաէլեկտրակենտրոն» փակ բաժնետիրական ընկերության համար երկդրույք սակագնային համակարգում՝

ա) առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 9.066 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 10.879 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

բ) հզորության ամսական վճարը՝ 572.39 դրամ/կՎտ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 686.87 դրամ/կՎտ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը:

1.4. «Որոտանի հիդրոէլեկտրակայանների համալիր» փակ բաժնետիրական ընկերության համար երկդրույք սակագնային համակարգում՝

ա) առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 7.882 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 9.458 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

բ) հզորության ամսական վճարը՝ 701.2 դրամ/կՎտ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 841.44 դրամ/կՎտ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը:

1.5. «Միջազգային էներգետիկ կորպորացիա» փակ բաժնետիրական ընկերության համար երկդրույք սակագնային համակարգում՝

ա) առաքվող էլեկտրաէներգիայի դրույքը՝ 5.250 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 6.300 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

բ) հզորության ամսական վճարը՝ 276.44 դրամ/կՎտ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 331.73 դրամ/կՎտ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը:

1.6. «Բարձրավոլտ էլեկտրացանցեր» փակ բաժնետիրական ընկերության կողմից՝

ա) էլեկտրաէներգետիկական համակարգին էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայության մատուցման սակագինը (արտադրող կայաններից առաքված էլեկտրաէներգիայի ամբողջ քանակի համար)՝ 0.847 դրամ/կՎտժ՝ առանց ավելացված արժեքի հարկի և 1.016 դրամ/կՎտժ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը,

բ) արտահանման լիցենզիա ունեցող անձանց էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայության մատուցման սակագինը՝ արտահանված յուրաքանչյուր կՎտժ -ի համար՝ 0.847 դրամ, առանց ավելացված արժեքի հարկի և 1.016 դրամ՝ ներառյալ ավելացված արժեքի հարկը:

2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության բնական մենաշնորհների կարգավորման հանձնաժողովի 2003 թվականի դեկտեմբերի 22-ի «Արտահանվող

էլեկտրական էներգիայի հաղորդման ծառայության մատուցման սակագին սահմանելու մասին» № 90Ա և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2004 թվականի նոյեմբերի 30-ի «Էլեկտրա-էներգետիկական համակարգի սակագների մասին» № 157Ա որոշումները:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2006 թվականի հունվարի 1 - ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Ռ.ՆԱՁԱՐՅԱՆ

ք. Երևան
29 նոյեմբերի 2005թ.